

ԱՆՈՒԹ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

**ՖՐԻՏՅՈՒ ՆԱՆՍԵՆԸ ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ
ԵԿԵՂԵՑԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Դին հայկական մշակույթում մեծ դրէ է գրավում նպատակաւուցությունը, որը ցայլուն արդիականությունը է VII դարի ճարտարապետության մեջ, մի ժամանակաշրջան, երբ Եվրոպայում քրիստոնեական ճարտարապետությունն իր առաջին քայլերն էր անուն:

Ֆ. ՆԱՆՍԵՆ

Հայկական ճարտարապետությունը Աշաճավորվել է ազգային նկարագրի բյուրեղացումով, ստեղծագործական խոշոր նվաճումներով ու զարգացման կուր հաջորդականությամբ: Արդեն վաղ միջնադարում /4-6-րդ դդ./ ստեղծվել են եկեղեցական շինությունների հատակագծային և ծավալատարածական բազմապիսի հորինվածքներ: Հայկական ճարտարապետության մասին պատճեն է գրում զիտնական, բնեուախուզ, բնագետ և մեծ հումանիստ Ֆրիտյոֆ Նանսենն իր «Խարված ժողովուրդ» գրքում, որը անաշառ ներկայացնում է հայոց պատմությունն ու 1920-ական թվականներին դեպի Հայաստան կատարած ուղևորությունները¹:

Նանսենը հիացմունքով է խոսում հայ ժողովորդի, Զրա բարձրարվեստ մշակույթի և համաշխարհային քաղաքակրթությանը հայության բերած նպաստի մասին: «Տաղանդավոր այս ժողովորդի ինքնատիպ զարգացման ընթացքն իր էական ազդեցությունն է թողել ոչ միայն բյուզանդական, այլև արևմտաեվրոպական մշակույթի վրա»²: Որպես ապացուց Նանսենը վկայակոչում է համաշխարհային մշակույթի և ճարտարապետության, մասնավորապես եկեղեցաշինության որոշակի օրինակներ: «Վայ շրջանում հայ ժողովուրդն առաջինն էր, որ քրիստոնեությունն ընդունեց որպես պետական կրոն և իր երկրի սահմաններից դուրս սկսեց ծավալել եկեղեցական մշակութային գործունություն: Վեցերորդ դարից առաջ, կարծիք կա՝ նոյնական 4-րդ դարում, Երուսաղեմում և Պաղեստինի այլ վայրերում հայերը կառուցել են 70 վանք՝ չհաշված այն բազմաթիվ վանքերը, որ կառուցել են Եգիպտոսում, Սինայի ափին, Ալեքսանդրիայում և Թերահնում: 11-12-րդ դարերում Եգիպտոսում շատ հայեր էին ապրում: Հայերը մեծ դեր են խաղացել առև Բյուզանդիայի պատ-

¹ 1924 թ. Նանսենը գալիս է Հայաստան, որպեսզի հևտագործություններ կարարի ամայացած և անապարհարծած հողագործությունների արիստուկան ոռոգման համակարգ սփռենալու համար, որպեսզի այդ հողագործությունները քրամադրվեն արևմտահայական զարթականներին:

² Ֆրիտյոֆ Նանսեն, Խարված ժողովուրդ, Խ 229:

մոլորակ մեջ՝³:

«Մեր՝ հյուսիսային գերմաներիս շփումը Հայաստանի հետ նոյնպես առանց ազդեցության չի եղել: Արժանարիշատակ է այն փաստը, որ գոթերը քրիստոնության մասին ունեցած իրենց առաջին տեղեկությունների համար մասսաբ պարտական են հայերին: Սովոր Բուզգեն հիշատակում է, որ Ուգֆիլաս եպիսկոպոսի կողմից Աստվածաշնչի գոթերեն թարգմանությունը պարունակում է բազմաթիվ հայաբանություններ: Դա բացարկվում է Արամով, որ գոթերը 257 թվականին Ուգֆիլասի պատճին ու տատին որպես ուզմագերի բերել էին հարավ-արևմտյան Ռուսաստան Կապառվկիայից, ուր միշտ էլ շատ հայեր են ապրել: Այդ ժամանակ Կապառվկիայում էր ուսանում և Գրիգոր Լուսավորիչը: Գոթերը Ան ծովի ափերին եղած ժամանակ նոյնպես շփվել են հայերի հետ՝ ամենից առաջ վաճառակամմերի և քարոզիչների միջոցով: Գոթական ճարտարապետության շատ զծեր, որ գոթերը հետագայում իրենց հետ տարան Բուղարիա և Արևմտյան Եվրոպա, իրենց վրա կրում են հայկական ճարտարապետության ազդեցությունը»⁴:

«Հայկական այդ ազդեցությունները հասել էին նոյնմիսկ Սկանդինավիա և, անշուշտ, դրանով կարելի է բացատրել, օրինակ, Ծվեդիայում Բինուպենի և Բլեքինգենի դամբարանադաշտերի և գերեզմանաքարերի այդշափ նմանությունը հայկական գերեզմանատների և տապանաքարերի հետ: Հետագայում այդ կապը չի խզվել: Պրոֆեսոր Մագնու Օլեն իմ ուշադրությունը հրավիրեց այն փաստի վրա, որ Արե Ֆրոդեն «Խալանդացիներ» գրքում խոսում է երեք «Երմսքիր»-ների /այսինքն՝ հայերի/ Պետրոսի, Արքահամի և Ստեփանոսի մասին, որոնք Խալանդիայում ներկայացել էին որպես հայ եպիսկոպոսներ»:

«Եկեղեցական ճարտարապետությունն Արևմուտքում սկսեց զարգանալ մի քանի հարյուրամյակ ավելի ուշ և իր վրա կրեց արևելյան ճարտարապետության ուժեղ ազդեցությունը: Այդ ազդեցությունը գալիս է ոչ թե Բյուզանդիայից, այլ զարգացման ավելի բարձր մակարդակ ունեցող Սովորավոր Ասիայից՝ Սիրիայից, Միջազգետքից, Հայաստանից և Վրաստանից: Արևմուտք գաղթած ասորիներն ու հայերն էին այդ ազդեցության տարածողները: Ռումանական ճարտարապետության շատ զծեր դեռ վաղ ժամանակներում գոյություն են ունեցել Արևելքում: Դրանք են՝ ծանր կամրջապուների առկայությունը սյուների կողքին, խորանարդան խոյակը, սանամեջ կամարները, արտաքին բարենքն կիսապուները, ձագարանն ճակատամուտքը, որը դեպի ներս նեղացող իր շարակցված կամարներով և կիսապուներով այնքան բնորոշ է միջնադարի եվրոպական ճարտարապետությանը: Ահա ճարտարապետության այս բոլոր զծերը վաղուց ի վեր կիրառվում է Հայաստանում: Ծինությունները քարերի մուգ և բաց երանգներով, ժապավենանքն և շերտերով զարդարելու արվեստը հայերը սովորել են խալերից, որ ավելի ուշ գործածության մեջ մտավ իտալիայում, հատկապես Ծննդվայրում և Ֆլորենցիայում: Կաթողիկեն եկեղեցու փայտածածկին փոխարինող հովհարածն կամարը վերցված է Միջազգետքից, իսկ քառամկյուն եկեղեցու կամարանքն զմբեթը հայկական և վրացական եկեղեցու նվաճումն է: Դեռ վաղ միջնադարում վերջինս, որպես Հին Հոռոմի զմբեթաշինությունից տարբեր մի ոճ, կիրառություն գտավ Եվրոպայում: Այն իր դրոշմը դրեց Ս. Սովորայի տաճարի ճարտարապետական մտահա-

³ Նոյն փեղում, լ.ջ 230:

⁴ Նոյն փեղում, լ.ջ 32:

ցումների վրա և ազնութեան Հայաստանի հետ առնչվող գործերի միջոցով տարածեց
Արևոտքում»⁵:

Կարևոր են նաև Սուրբ Սոֆիապի տաճարի մասին Ֆ. Նանսենի դիտարկումները. «Ինչ-
քան մոտածում եմ այս համեղուկի մասին, այնքան հակվում եմ կարծելու, որ Արա հիմքում
ընկած է հայկական և Վրացական եկեղեցաշխնությունը, և իրավացի է Ստրժիգովսկին,
որ Ս. Սոֆիապի տաճարի հիմնական մտահղացումը բխեցնում է Հայաստանի և Վրաստա-
ցից; Ինչպես Լեռնարդոն և Բրամանտեն գմբեթաշխնության մասին իրենց պատկերացում-
ներով պարտական են հայերին, այնպես էլ Անթեմիոսն իր հսկա կառուցի հիմնական
մտահղացումը վերցրել է նույն աղբյուրից՝ հայերից: Արևոտքի երկու առաջնակարգ
եկեղեցիների /Ս. Սոֆիապի տաճարը Բյուզանդիայում և Սուրբ Պետրոսի եկեղեցին Հոռ-
մում/ ճարտարապետական հիմնական մտահղացումը վերցված է հայկական եկեղեցաշխ-
նությունից:

Հայ Նանսենի, հայկական ճարտարապետական ոճով կառուցված եկեղեցիների ու
բապտիստական աղոթատեղերի մի ամբողջ շարք կա Աթենքում, Հյուսիսային Խովիա-
յում, Ֆրանսիայում և այլ վայրերում: Գիտնականը, ծանոթ լինելով Լեռնարդոյի գծագրե-
րին և էսքիզներին, գտնում է, որ դրանք հարազատ են հայկական գմբեթակիր եկեղեցինե-
րին և մատուռներին՝ հավատացած լինելով, որ դրանք ստեղծվել են բնօրինակի հետ
վարպետի անմիջական ծանոթությունից: Ի հակադրություն այն կարծիքի, որ Բյուզանդի-
ան է ազդեցություն գործել հայկական ճարտարապետության վրա, Նանսենը գրում է.
«Հայկական եկեղեցին հիմնադրվել է բյուզանդականից ավելի վաղ և Հայկական եկեղե-
ցու ճարտարապետությունը տարբերվում է բյուզանդականից խստությամբ, զարդարվելի
օգտագործման նորությամբ և զուապ ձևերով:

Միշին դարերի մեծագույն նվաճումը՝ գոյթական ոճը և իր հիմնադրույթներով մեծա-
պես պարտական է հայ ժողովորդի ստեղծագործական ոգուն: Չի կարելի անտեսել, որ գո-
յթական ճարտարապետությանը բնորոշ շատ գծեր, Եվրոպայում գոյթական ոճի ձևավորու-
մից շատ հարյուրամյակներ առաջ, առկա էին Հայաստանի եկեղեցիներում և ճարտարա-
պետական այլ կառուցներում: Սա վերաբերում է հատկապես Անիի Մայր տաճարին:
Վերջինիս ճարտարապետական ոճը կարծես անցում լինի տիպիկ հայկականից դեպի ոռ-
մանգոյթական՝ ցուցադրելով գոյթական ոճի առավել բնորոշ գծերը, ինչպիսիք սրբակա-
մարները և պյունաշարերն են: Նմանությունն այնքան ակնհայտ է, որ գոյթական ոճի Եվրո-
պական ծագման կողմնակից որոշ արվեստաբաններ կարծում են, որ Անիի Մայր տաճա-
ռը պետք է վերանորոգված լինի տաճաներեկերորդ դարի արևմտանելուական ճարտա-
րապետների կողմից: Սակայն բոլոր վեճերն անհիմն են: Եթե նոյնիսկ եկեղեցու կառուց-
ման ժամանակն իր ձևի մեջ բավարար ճշգրտությամբ հնարավոր չէ որոշել, մինանուն է՝
նման «գոյթական» գծեր ավելի կամ պակաս ցայտունությամբ հանդիպում են նոյն կամ
ավելի վաղ շրջանին պատկանող հայկական ուրիշ շատ եկեղեցիներում: Եկեղեցու այս
տիպը առաջացել է Միշագնուքի՝ հարավից մուտք գործած հովհարաձև կամարներով եր-
կարավում եկեղեցիների և տեղի քառանկյուն գմբեթավոր եկեղեցիների ճարտարապե-

⁵ Նոյեմբերի 19 232:

տակամ ոճերի միախառնումից: Այստեղից է սկզբնավորվել եռանավ արկարավուն եկեղեցու ճարտարապետական ոճը: Այս տիպի հնագույն կառուցքը Դվինի Ս. Գրիգոր եկեղեցին է, որը կառուցվել է յոթերորդ դարի սկզբին և ավերվել է երկրաշարժից, իններորդ դարում»⁶:

«Անի Մայր տաճարում և ճարտարապետական այս ձևի եկեղեցիներում որպես գործական ոճի բնորոշ զիծ կարելի է թվարկել ծանր սրակամարմերը, որոնք ծառայում են հիմնական կամարմերը չորս կամրջապումերին կապակցելու և կենտրոնական գմբեթը կրելու համար: Աշխարհիկ շինություններում ևս, ինչպես Անի բերդն է, հաճողապես է սրակամարը: Սյուները, որոնց վրա հանգչում է գմբեթը, այսինական բառանկյուն կամրջապումերի տրամաբանական զարգացումն է: Կամրջապումերը կապակցվում են կամարաձև պատերի այունաշարի հետ: Կողագմբեթը հայկական եկեղեցիներում և վաճքերում բավական ցայտուն է: Վերջապես, կարելի է հիշատակել կենտրոնական գմբեթը կրող որմնախորշերով պատերի արտաքին պատվարը: Այսոնդ տեսնում ենք ճարտարապետական նույն մտահղացումը, որն իր արտահայտությունն է գտնել գործական կամարմերում և կիրառվում է վաղուց ի վեր»⁷:

«Գործական ոճի սկզբնավորումը Արևմտյան Եվլուպայում կապված է հայերի հետ, որոնք տասնմեկից տասներկուերորդ դարերում ցրված էին ամենուրեք: Այստեղ դեռ է խաղացել նաև այն հանգամանքը, որ Կիլիկիայի հայկական պետությունը տասնմեկերորդ դարից ի վեր սերտ շփումներ է ունեցել խաչակիրմերի և Արևմտյան Եվլուպայի հետ: Այսպիսով, գործական ոճը, որ միշնադարի համաշխարհային մշակույթի նշանակալի նպանումներից է, իր սկզբնավորման շրջանում ազդեցություն է կրել փոքր ու տաղանդավոր հայ ժողովորդի մշակույթից մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ այդ ժողովորդը օրինական պայքար էր մղում ամեն թշնամու բանակիրմերի դեմ:

Հայկական եկեղեցին իր առանց այունաշարերի պարզ, հոն պատերով ու կամրջապումերով, ծանր զանգվածեղ, ներփակ ու համասեռ ներգործությամբ ճշտիվ վերատարրում է երկրի բնույթը: Նրա մեջ ամփոփվում են ամերկնելի Արարատի և Արագածի վեհությունն ու ամբողջականությունը»⁸:

Այսպիսին են Ֆ. Նանսենի դիտարկումներն ու զնամատականները Հայոց Եկեղեցու և եկեղեցաշինության մասին:

⁶ Նոյն գիրում, լ. 234:

⁷ Նոյն գիրում, լ. 122:

⁸ Նոյն գիրում, լ. 179: